ոչ միայն ամսաթիւը (Քաղոց ամսի 17 = Նոյեմբերի 24), այլեւ տարեթիւը՝ Վռամ Գուրի հինգերորդ տարի = 424 թ.: Յաւելելի է նաեւ, որ ըստ Ղ. Ալիշանի՝ «զռամականն զնամա» բառերը կարելի է վերականգնել «զ[Վ]ռամականն զնամա[կ]»: Սակայն նման լրացման անհրաժեշտութիւն չի զգացւում (ինչպէս նկատել է դեռեւս Գր. Խալաթեանցը), քանի որ «ռամ» պահլաւերէն «ժողովուրդ» է նշանակում, իսկ «նամա»-ն պարսկերէնում նոյն «նամակ»ն է (տե՛ս Հր. Աճառեան, ՀԱԲ, հտ. Դ, էջ 140, հտ. Գ, էջ 425), եւ փաստօրէն՝ Սահակ Պարթեւի շարադրանքում ուշագրաւ յիշատակութիւն կայ Իրանի պետական աշխարհագրերի՝ մարդահամարների (որոնք ծանօթ էին նաեւ Մովսէս Խորենացուն) ամփոփիչ վաւերագրերի մասին:

Այսպիսով, մեզ հասած «Գահնամակ»-ը կարող է ներկայացուել հետեւեալ նոր գիտա-քննական բնագրով՝ պատրաստուած մէկ գրչագրով պահպանուած յուշարձանի (այն նշանակում ենք *A*) սկզբնօրինակի վերականգնման սկզբունքներով.

«[Ա]հա կայ[1] խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի թագաւորի՝ զոր ի Տիսպոնն, խաւսեցեալ՝ եթէ՞ ես զռամականն զնամա[2], զոր Արտաշրի ի դիւանին՝ տեսի:

Ի քաղոց ամսոյ ի ԺԷ եւ Վռամայ արքայից արքայի եւ բարերարի Ե-ի[3] գիր արարի ես՝ Սահակ կաթողիկոս, թէ որպէ՛ս Ձեր բարերարութիւնդ հրաման տացէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց՝ որպէս յառաջ առ Հայոց ազգին, նոյնպէս եւ ի Ձերում դիւանի՝ շահհամա[ր]ին[4] առնել, որ յայսմ հետէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց գահ ի յայտ լինէր:

Նոյնպէս Ներսեհ՝ հրամանաւ արքայից արքայի, եւ ես՝ [Սա]հակ[5] Հայոց կաթողիկոս, կնքեցաք զԳահնեմակին եւ եդաք մատանի զարքայից արքայի եւ զմերս:

Եւ է այսպէ՛ս արդար եւ ճշմարիտ.

Առաջին իշխանն Հայոց եւ մախղազն,
Ա.[6] Սիւնեաց տէր,
Բ. Ասպետն,
Գ. Արծրունեաց տէր,
Դ. Մամիկոնէից տէր[7],
Ե. Շահապն Ծոփաց տէր[8],

---

[1] *A* հակայ *փխ* [Ա]հա կայ *(վերականգնում. ըստ Ալիշանի՝ վերականգնելի է* [Սա]հակայ*, իսկ ըստ Ախվերդեանի, Էմինի եւ Ադոնցի՝* [Իմ՝ Սա]հակայ*)*

[2] *Ըստ Ալիշանի՝ վերականգնելի է* զ[Վ]ռամականն զնամա[կ] *փխ* զռամականն զնամա *(A)*

[3] *A* բարերարի եւ *փխ* բարերարի Ե-ի *(վերականգնում. իմա՛* «Ե-ի [ամին]»*. հմմտ. երկաթագիր* **Ի**-**Ի***)*

[4] *A* շահհամային *փխ* շահհամա[ր]ին *(վերականգնում ըստ Ալիշանի եւ Ադոնցի. գուցէ, կարելի է վերականգնել նաեւ ըստ Խալաթեանցի՝* շահհամարն *փխ* շահհամային*. հմմտ. ուշ երկաթագիր կամ բոլորագիր* **ր**-**ի***)*

[5] *A* հակ *փխ* [Սա]հակ *(վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները. հմմտ.* Ե**Ս** [**Ս**ա]հակ*)*

[6] *Այս* Ա *եւ յաջորդ բոլոր թուահամարները, գուցէ, կարելի է հետագայ արտագրողի յաւելում համարել*

[7] *Ըստ Ադոնցի՝ վերականգնելի է* [Դ. Մաղխազունի], Դ. Մամիկոնէից տէր *(սակայն հմմտ. ծնթ. 5)*